եւ Մանաս գեղերը։ Հինդի առուի Բիւշտի առուն ոռոգում է Սեգլի, Պլուրակ, (Բլուրակ) եւ Բիւշտի գեղերը, նոյնպէս ձախից միանում է Ջելար առուն, ոռոգելով Սարաջիլ եւ Ջիլայ գեղերը։ Լոռի առուակը բղխում է Ակբունդար լշ–ից ու 7600′ բարձրութիւնից, անցնում է ոռոգելով Գիւլ–Անահիտ[1] գեղից, մտնում է Լոռի դաշտը, Հայֆ (Խայք), մեծ եւ փոքր Լոռի, Ջիրանի (Ծիրանի), Աշուկա, Ջինջէ, Կարաեաշմագ, Քսանքա, Եամբախսի, Խարդիշ, մտնում է Սիւնուր դաշտը, անցնելով Խանձաւերակ, Թոմլիա, Զուրակ (Զորակ) գեղերը ընդունում է Սիւնուր առուն, որն անցնում է Սիւնուր գեղից։

Զորոզմա 5973 ոտք լեռներից դէպի հիւսիս արեւելք է ուղղուած իր ընթացքով Պուլուր (Բլուր) առուակը, որը ոռոգում է Եագուբաբդալ, Զորոզմա, Կիպիդի, Մացրա (Մեղրէ), Պուլուր, Իմիլո, Էգնի, Ջիբրէ, Վարուշա, Էժմատի կամ Էրմադի, Փոսուզ, Քելաղբիւր, Ուրէն–Շէհէր[2], Կիթրար գեղերի

---

1 Գիւլ–Անահիտի գեղը — աւերակներով, Վարդեհերի նման իր բազմալքիւր ջրերով եւ խորխոր ձորերով նուիրուած է եղել Անահիտին։ Այս ձորերում ջրերը տեղտեղ ճակներ եւ ճահիճներ են կազմել, որոնք վիշապազանց են նուիրուած։

2 Ուրէն–Շէհէրը մի աւերակ աւանի, կամ նշանաւոր ուխտատեղիի է նմանում, ունի աւերակներ եւ տաճարի մնացորդներ, որոնք պէտք է պեղուին, որ հնար լինի որոշ գաղափար կազմելու։ Ինչպէս Յուրէն–Շէհէրը, նոյնպէս